Habitat for Humanity® Armenia

ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Հաբիթաթ Արմենիան կերտում է **ուժ, կայունություն, ինքնավստահություն** և կառուցում է **ապաստաններ**

2019

Ֆինանսական տարի

(Հունիսի 30, 2017թ. - Հուլիսի 1, 2018թ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱԲԻԹԱԹ ՖՈՐ ՀՅՈՒՄԵՆԻԹԻ ԱՐՄԵՆԻԱՅԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ 4

ՀԱԲԻԹԱԹ ՖՈՐ ՀՅՈՒՄԵՆԻԹԻ ԱՐՄԵՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ 5

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԹԻՎՆ՝ ԸՍՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ 6

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԹԻՎՆ՝ ԸՍՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ 6

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՄԻԿՐՈՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 7

Վերականգնվող էներգիայի ֆինանսավորում 8

Բնակարանների վերանորոգում, էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի համակարգեր 9

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ 10

Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացում՝ ուղղված ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին 12

Բազմաբնակարան շենքերի ընդհանուր տարածքների վերանորոգում 13

Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում 14

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 16

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ 17

ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 18

Ցածր եկամուտ ունեցող ընատիքների բնակարանային պայմանների բարելավումը «Գլոբալ Վիլիջ» ծրագրի միջոցով 18

Մեկօրյա շինարարություն 20

ՎԵՐԱՓՈԽԵԼՈՎ ԿՅԱՆՔԵՐ 21

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՉ 22



Հարգելի ընթերցող,

Մեր տեսլականն է ստեղծել մի այնպիսի աշխարհ, որտեղ յուրաքանչյուր ոք ունի ապրելու պատշաճ վայր: Մենք՝ «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա»-ի աշխատակիցներս, լիովին ընդունում և ջանք չենք խնայում՝ ստեղծելու այդ աշխարհը: Ահա թե ինչու՝ յուրաքանչյուր տարի էլ ավելի շատ ընտանիքների է պարգևում ապահով և անվտանգ ապաստան ունենալու բերկրանքը: Հայաստանը պետք է դառնա այն երկիրը, որտեղ յուրաքանչյուրը կունենա ապրելու պատշաճ կացարան:

Հաբիթաթ Արմենիայի 2019 ֆինանսական տարվա ծրագրերի մասին ընթերցելիս դուք կիմանաք, թե Հաբիթաթ Արմենիան քանի ընտանիքների է աջակցել հիմնադրման օրվանից ի վեր մինչև 2018թ. հունիսի ավարտը (տես աջակցություն ստացած ընտանիքների ընդհանուր թվի աղյուսակը 6-րդ էջում), ինչպես նաև քանի անհատ է ստացել բնակարանային աջակից ծառայություններ (տես բնակարանային աջակից ծառայությունների աղյուսակը 6-րդ էջում):

Դուք, իհարկե, ավելի շատ տեղեկություններ կստանաք մեր առաջիկա տարվա ծրագրերի, պլանների և կամավորական աշխատանքների հնարավորությունների մասին, որոնք ուղղված են բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների աջակցությանը:

Այնուամենայնիվ, մեր հիմնական ձեռքբերումը «Հայաստանում կենսապայմանների բարելավում» ծրագրի մեկնարկն էր: Այս ծրագրի միջոցով Հաբիթաթ Արմենիան նպատակ ունի ստեղծելու «Նորոգի» ռեսուրսային կենտրոն:

Ձեր աջակցությամբ մենք կշարունակենք ներդնել մեր ջանքերը՝ հասնելու Հաբիթաթ Արմենիայի տեսլականին:

Միասին մենք կարող ենք փոխել աշխարհը:

Լուիզա Վարդանյան
Գործադիր տնօրեն
«Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամ

«Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամի մասին

«Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա»-ն (Հաբիթաթ Արմենիա) «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Ինթերնեշնլ»-ի ազգային գրասենյակն է Հայաստանում՝ հիմնված այն համոզմունքի վրա, որ յուրաքանչյուր ոք պետք է ունենա պատշաճ տուն:

2000 թվականից ի վեր, Հաբիթաթ Արմենիայի ջանքերի շնորհիվ, շուրջ 7,600 ցածր եկամուտ ունեցող ընտանիքներ նոր հույս են գտել մատչելի բնակարանների տեսքով:

Վերջին տարիներին Հաբիթաթ Արմենիան մեծացրել է իր դերը բնակարանային պայմանների բարելավման գործում՝ նպաստելով երկրում էներգախնայողության բարեփոխումների իրականացմանը: Համագործակցելով ֆինանսական հաստատությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների, համատիրությունների և բազմաբնակարան շենքերի բնակիչների հետ՝ Հաբիթաթ Արմենիան նախաձեռնում է լայնածավալ, կայուն էներգախնայողության ծրագրեր բազմաբնակարան շենքերում:

Մատչելի բնակարանային պայմաններ ստեղծելուն ուղղված ջանքերին կարող է օգնել յուրաքանչյուր ոք՝ ֆինանսական աջակցության և կամավորության միջոցով սատարելով ընտանիքներին ունենալ ուժ, կայունություն և ինքնավստահություն և իրենց համար կերտելու առավել բարեկեցիկ կյանք:

Ապաստան շնորհելով՝ մենք հզորացնում ենք: Մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.habitat.am կայք:

Աջակցություն ստացած ընտանիքների ընդհանուր թիվն՝ ըստ ֆինանսական տարիների



Բնակարանային աջակցություն ստացած ընտանիքների ընդհանուր թիվն՝ ըստ ֆինանսական տարիների



Բնակարանային միկրոֆինանսավորում

Համագործակցելով ունիվերսալ վարկային կազմակերպությունների հետ՝ Հաբիթաթ Արմենիան իրականացնում է միկրոֆինանսավորման ծրագրեր, որոնց նպատակն է ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքներին հասանելի դարձնել ֆինանսական միջոցներ՝ հնարավորություն ստեղծելով վերանորոգելու և վերակառուցելու իրենց կացարանները, բարելավելու էներգաարդյունավետությունը, ջրամատակարարման և սանիտարական պայմանները և օգտագործելու վերականգնվող էներգիայի աղբյուրներ: Ծրագրերը նպատակ ունեն նաև կյանքի վերակոչել պատերազմից տուժած քաղաքային և գյուղական համայնքները: Բնակարանային միկրոֆինանսավորման ծրագրերի շրջանակում Հաբիթաթ Արմենիան 2000 թ-ից մինչև 2018 թ-ի հունիսի 30-ն աջակցել է 4,477 ընտանիքի:

Ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքների կացարաններում առկա հիմնական խնդիրներն են գազամատակարարման վատ պայմանները, կացարանների թերի ջերմամեկուսացումը, ջեռուցման, ջրամատակարարման և կոյուղատար համակարգերի տեխնիկական վատ վիճակը, սանիտարական հանգույցների և խոհանոցային պայմանների ոչ բավարար վիճակը: Պատուհանների ջերմամեկուսացումն առաջնային խնդիր է բոլոր մարզերում: Մի շարք մարզերում շատ ընտանիքներ չունեն պատշաճ ջեռուցման համակարգ և կացարանի տաքացման համար օգտագործում են փայտ կամ գոմաղբ, որն իր հերթին բացասական ազդեցություն է ունենում առողջության և շրջակա միջավայրի վրա:

Այս ծրագրերի շրջանակում Հաբիթաթ Արմենիան տրամադրում է նաև տեխնիկական աջակցություն՝ կազմակերպելով դասընթացներ մասնակից ընտանիքների, ինչպես նաև գործընկեր ֆինանսական հաստատությունների վարկային մասնագետների համար՝ մշակելով և բաժանելով տեղեկատվական բուկլետներ, տրամադրելով շինարարական տեխնիկական խորհրդատվություն: Սույն ծրագրերը նաև հնարավորություն են տալիս կամավորներին մասնակցելու շինարարական աշխատանքներին:

Ծրագրի անվանումը՝ «Վերականգնվող էներգիայի ֆինանսավորում»

Ծրագրի տևողությունը՝ օգոստոս, 2016թ. – փետրվար, 2022թ.
Ծրագրի բյուջեն 2019 ՖՏ-ում՝ $19,802
Ներդրված կապիտալ՝ ընդհանուր $323,000, որից $230,000-ը՝ Հաբիթաթ Արմենիայի ֆինանսավորում և $93,000-ը ՝ «Գլոբալ Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ի համաֆինանսավորում
Պլանավորված գործընկեր ընտանիքների թիվը 2019 ՖՏ-ում՝ 94
Վարկի միջին գումարը՝ $1,800
Մեկ ընտանիքի աջակցության միջին գումարը՝ $2,010
Ծրագրի գործընկերը՝ «Գլոբալ Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ
Պահանջվող գումարը՝ $113,500

Հայաստանն ունի արևային էներգիայի մեծ ներուժ. տարեկան կտրվածքով Հայաստանում արևային ժամերի միջին քանակը կազմում է 2500 ժամ: Սույն ծրագիրը ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքներին հնարավորություն է տալիս ձեռք բերել և տեղադրել արևային սարքավորումներ: Արևային էներգիայի կիրառումը ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքների կողմից հնարավորություն է ընձեռում վերջիններիս ունենալ մատչելի տաք ջուր և էլեկտրականություն՝ միաժամանակ կրճատելով էներգակիրների ծախսերը:

Բնական գազի գինը վերջին տասնամյակում ավելի քան կրկնապատկվել է՝ բացասաբար ազդելով ցածր և միջին եկամուտ ունեցող բնակչության ջեռուցման պայմանների վրա: Այսպիսով, ծրագրի հաջող իրականացումը զգալիորեն կմեղմացնի էներգակիրների աճող գների ազդեցությունը բնակչության բարեկեցության վրա:

Կազմակերպությունը նաև բարձրացնում է բնակչության իրազեկվածությունն արևային տեխնոլոգիաների և դրանց առավելությունների վերաբերյալ՝ կազմակերպելով դասընթացներ ծրագրին մասնակից ընտանիքների և գործընկեր ֆինանսական հաստատության վարկային մասնագետների համար:

Ծրագրի անվանումը՝ «Բնակարանների վերանորոգում, էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի համակարգեր»

Ծրագրի տևողությունը՝ սեպտեմբեր, 2018թ. – սեպտեմբեր, 2022թ.
Ծրագրի բյուջեն 2019 ՖՏ-ում՝ $20,000
Ներդրված կապիտալ՝ ընդհանուր $300,000, որից $200,000-ը՝ Հաբիթաթ Արմենիայի ֆինանսավորում և $100,000-ը ՝ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ համաֆինանսավորմամբ
Պլանավորված գործընկեր ընտանիքների թիվը 2019 ՖՏ-ում՝ 60 ընտանիք
Վարկի միջին գումարը՝ $2,083
Մեկ ընտանիքի աջակցության միջին գումարը՝ $2,415
Ծրագրի գործընկերը՝ «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ
Պահանջվող գումարը՝ առկա է՝ $200,000, փնտրում ենք $15,000 տեխնիկական աջակցության ֆոնդեր

Ծրագրի նպատակն է մշակել միկրոֆինանսավորման ծրագիր, որը ուղղված կլինի բնակարանային վերանորոգմանը (70-80%), էներգոարդյունավետության բարձրացմանը, էներգախնայող սարքավորումների ու վերականգնվող էներգիայի օգտագործմանը (20-30%), Ծրագիրը կնպաստի շահառուների բնակարաններում հարմարավետության մակարդակի բարձրացմանը, էներգախնայողության բարելավմանը, ինչպես նաև կխթանի վերականգնվող էներգիայի օգտագործումը:

Ծրագրի թիրախային խումբ են հանդիսանում Երևանում և հարակից տարածքներում բնակվող ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքները:

Բազմաբնակարան շենքերի վերանորոգում և էներգաարդյունավետության բարձրացում

Համատիրությունների կարողությունների զարգացում

Ներկայում բազմաբնակարան շենքերի (ԲԲՇ) կառավարումը և պահպանումը Հայաստանում կարևոր խնդիր է հանդիսանում: Բնակարանային ֆոնդի մեծ մասը գտնվում է անմխիթար վիճակում, և բացակայում են բնակարանային ֆոնդի պատշաճ պահպանման և կառավարման համակարգեր: Բազմաբնակարան շենքերի սեփականատերերի կողմից վճարվող պարտադիր վճարները բավարար չեն շենքերի վերանորոգման ծախսերը հոգալու համար: Միևնույն ժամանակ ԲԲՇ ոլորտը կառավարող օրենսդրական դաշտը թերի է. բացակայում են բնակարանային ֆոնդի պատշաճ սպասարկումը, պահպանումը և կառավարումն ապահովող օրենսդրական բազմաթիվ դրույթների կիրարկման գործուն մեխանիզմներ:

Սույն խնդիրը լուծելու համար Հաբիթաթ Արմենիան 2011թ-ին մեկնարկեց «Բազմաբնակարան շենքերի ընդհանուր տարածքների վերանորոգում» ծրագիրը, իսկ 2013թ-ին՝ «Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացում ՝ ուղղված ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին» ծրագիրը՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության հետ համագործակցությամբ: Սույն ծրագրերը նպատակ ունեն ՝

- Մշակել և փորձարկել շենքերի վերանորոգման, էներգաարդյունավետության բարձրացման և պահպանման կիրառելի և արդյունավետ մոդելներ
- Զարգացնել ԲԲՇ կառավարման մարմինների ինստիտուցիոնալ կարողությունները

- Նպաստել ԲԲՇ կառավարման, պահպանման և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված օրենսդրական դաշտի բարելավմանը:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար Հաբիթաթ Արմենիան համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների, ֆինանսական հաստատությունների, համատիրությունների, միջազգային կազմակերպությունների, բնակիչների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Ծրագրերի մեկնարկից մինչև 2018թ. հունիսի վերջ սույն ծրագրերի շրջանակում 44 շենք է վերանորոգվել և աջակցություն է տրամադրվել 2,576 ընտանիքի:

Եվրոպական Միության հետ համագործակցությամբ 2014թ. Հաբիթաթ Արմենիան սկսել է իրականացնել «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում» (ՎԱԷՀՔ) ծրագիրը, որն ուղղված է Սպիտակ և Վայք քաղաքների բնակիչների համար էներգախնայողության կիրառելի և արդյունավետ մոդել մշակելուն և փորձարկելուն՝ կիրառելով էներգաարդյունավետության կայուն միջոցառումներ և վերականգնվող էներգիայի աղբյուրներ բազմաբնակարան և հանրային շենքերում: 2018թ. հունիսի վերջի դրությամբ սույն ծրագրի շրջանակում էներգաարդյունավետության միջոցառումներ են իրականացվել 23 շենքում, որից 13-ը՝ Սպիտակում, իսկ 10-ը՝ Վայքում, որի արդյունքում աջակցություն է տրամադրվել 533 ընտանիքի:

Ծրագրի անվանումը՝ «Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացում ՝ ուղղված ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին» (ԲԲՇԷԱԲ)

Ծրագրի տևողությունը՝ ապրիլ, 2013թ. – հունիս, 2019թ.
Ծրագրի բյուջեն 2019 ՖՏ-ում՝ $81,510
Ներդրված կապիտալ՝ $200,000՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից և $22,510՝ Երևանի քաղաքապետարանի կողմից
Պլանավորված գործընկեր ընտանիքների և շենքերի թիվը 2019 ՖՏ-ում՝ 180 ընտանիք, 5 շենք
Մեկ շենքին տրամադրվող վարկի միջին գումարը՝ $3,160
Ծրագրի նվիրատուն՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալություն (ԱՄՆ ՄԶԳ), Հաբիթաթ Արմենիայի համաֆինանսավորում
Ծրագրի գործընկերները՝ Երևանի քաղաքապետարան, համատիրություններ, «Ինեկոբանկ» ՓԲԸ

Ծրագիրը նպատակ ունի բարելավել բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետությունը և նվազեցնել ցածր եկամուտ ունեցող ընտանիքների կողմից կատարված ծախսերը էներգակիրների վրա: Ծրագրի մեկնարկից մինչև 2018թ. հունիսի վերջ սույն ծրագրի շրջանակում էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքներ են իրականացվել 13 բազմաբնակարան շենքերում՝ ներառելով մուտքերի պատուհանների և դռների տեղադրում/ջերմամեկուսացում, լուսավորության համակարգի արդիականացում և նկուղների ջերմամեկուսացում: Ծրագրի արդյունքում աջակցություն է տրամադրվել 679 ընտանիքի:

Հաբիթաթ Արմենիան համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների, ֆինանսական հաստատությունների, համատիրությունների, բնակիչների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ նպատակ ունենալով խրախուսել և բարելավել էներգաարդյունավետությունը բազմաբնակարան շենքերում: Ծրագրի շրջանակում իրականացվում են հետևյալ աշխատանքները՝ ԲԲՇ էներգաարդյունավետության բարելավմանն ուղղված աշխատանքներ, համատիրությունների կարողությունների զարգացում, բնակիչների և համատիրությունների իրազեկվածության բարձրացում բազմաբնակարան շենքերում էներգաարդյունավետ միջոցառումների իրականացման բազմակի օգուտների վերաբերյալ, ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների իրականացման ջատագովում՝ ուղղված Հայաստանում բնակարանային ֆոնդի արդյունավետ կառավարմանն ու պահպանմանը և ԲԲՇ ոլորտում ներդրումային դաշտի բարելավմանը:

Ծրագրի անվանումը՝ «Բազմաբնակարան շենքերի ընդհանուր տարածքների վերանորոգում»

Ծրագրի տևողությունը՝ 2011թ. - անժամկետ
Ծրագրի բյուջեն 2019 ՖՏ-ում՝ $30,980
Ներդրված կապիտալ՝ $84,160՝ Հաբիթաթ Արմենիայի կողմից, $49,750՝ քաղաքապետարանների կողմից և $26,960՝ համատիրությունների կողմից
Պլանավորված գործընկեր ընտանիքների և շենքերի թիվը 2019 ՖՏ-ում՝ 360 ընտանիք,10 շենք
Մեկ շենքին տրամադրվող վարկի միջին գումարը՝ $3,500
Ծրագրի գործընկերներ՝ քաղաքապետարաններ, համատիրություններ, «Ինեկոբանկ» ՓԲԸ
Պահանջվող գումար՝ $120,000՝ ներառյալ երաշխիքային ֆոնդի ստեղծումը

Հայաստանում բնակարանային ֆոնդի մեծ մասը գտնվում է անմխիթար վիճակում: Բազմաբնակարան շենքերի սեփականատերերի կողմից վճարվող պարտադիր վճարները բավարար չեն շենքերի վերանորոգման ծախսերը հոգալու համար: Սույն ծրագրի շրջանակում Հաբիթաթ Արմենիան մշակել է ֆինանսական մոդել, որը վարկավորման և սուբսիդավորման մեխանիզմների միջոցով համատիրությունների համար հասանելի է դարձնում անհրաժեշտ ֆինանսական միջոցները բազմաբնակարան շեքների ընդհանուր օգտագործման տարածքները վերանորոգելու համար: 2018թ. հունիսի 30-ի դրությամբ ծրագրի շրջանակում վերանորոգվել է 31 շենք, աջակցություն է տրամադրվել 1,897 ընտանիքների:

Հաբիթաթ Արմենիան նախատեսում է ստեղծել երաշխիքային ֆոնդ ($100,000)՝ վարկավորման գործընթացն ավելի դյուրին դարձնելու նպատակով: Վերջինս կնպաստի նաև ծրագրում նոր ֆինանսական հաստատությունների ներգրավմանը: Միևնույն ժամանակ համատիրությունները ձեռք կբերեն ֆինանսական հաստատությունների հետ աշխատելու փորձ և կսկսեն ստեղծել վարկային պատմություն, որն իր հերթին կբերի կայուն համագործակցության:

Ծրագրի անվանումը՝ «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում» (ՎԱԷՀՔ)

Ծրագրի տևողությունը՝ դեկտեմբեր, 2014թ. – դեկտեմբեր, 2018թ.

Ծրագրի բյուջեն 2014-2018թթ.՝ ընդամենը՝ €1,687,500, որից €1,350,000 ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից, իսկ €337,500՝ Սպիտակի և Վայքի քաղաքապետարանների կողմից

Ծրագրի բյուջեն 2019 ՖՏ-ում՝ €943,734

Պլանավորված գործընկեր ընտանիքների և շենքերի թիվը 2019 ՖՏ-ում՝ 234 ընտանիք, 22 շենք, 2 արևային ֆոտովոլտային կայան

Մեկ շենքի համար նախատեսված աշխատանքների միջին գումարը՝ €33,326

Ծրագրի գործընկերները՝ Սպիտակի քաղաքապետարան, Վայքի քաղաքապետարան, «Ինեկոբանկ» ՓԲԸ

ՎԱԷՀՔ ծրագիրն ուղղված է Սպիտակի և Վայքի բնակիչների համար էներգախնայողության կիրառելի և արդյունավետ մոդել մշակելուն և փորձարկելուն՝ կիրառելով էներգաարդյունավետության կայուն միջոցառումներ և վերականգնվող էներգիայի աղբյուրներ բազմաբնակարան և հանրային շենքերում: Ծրագիրը համահունչ է քաղաքապետարանների Համայնքային զարգացման կամ Կայուն էներգիայի զարգացման գործողությունների պլաններին՝ ըստ Քաղաքապետերի դաշնագրի պահանջների:

Ծրագրի շրջանակում ակնկալվող արդյունքներն են՝

- Տարեկան 15-30% էներգախնայողություն ընտրված բազմաբնակարան և հանրային շենքերում:
- Ընտրված բազմաբնակարան շենքերի բնակիչների իրազեկվածության բարձրացում էներգաարդյունավետության և էներգախնայող վարքի կարևորության մասին:
- Սպիտակի և Վայքի քաղաքապետարանների կարողությունների զարգացում՝ իրականացնելու կայուն էներգետիկ զարգացման ծրագրեր:
- Քաղաքապետարանների կողմից էներգիայի ընդհանուր սպառման մեջ վերականգնվող էներգիայի չափաբաժնի աճ:

2018թ-ի ֆինանսական տարվա վերջի դրությամբ ընդհանուր բարելավման աշխատանքները և էներգախնայող աշխատանքներն ավարտված են Սպիտակի 13 և Վայքի 10 բազմաբնակարան շենքերում: Շենքերը դարձել են էներգախնայող՝ ապահովելով 533 ընտանիք:

Ծրագրի անվանումը՝ «Հայաստանում կենսապայմանների բարելավում»

Ծրագրի տևողությունը՝ դեկտեմբեր, 2016թ. - դեկտեմբեր, 2018թ.
Ծրագրի բյուջեն 2016-2018թթ.՝ ընդհանուր €340 003
Ծրագրի բյուջեն 2019 ՖՏ-ում՝ €209,117
Աջակցություն ստացող անձանց պլանավորված թիվը՝ 400 մարդ
Ծրագրի նվիրատուն՝ Եվրոպական միություն, Հաբիթաթ Արմենիայի համաֆինանսավորում
Ծրագրի գործընկերները՝ Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Հյուսիսային Իռլանդիա

Հայաստանում ցածր և միջին եկամուտ ունեցող մարդիկ (մոտ 1 միլիոն) ունեն տարբեր բնակարանային կարիքներ: Ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքները չունեն կամ էլ ունեն սահմանափակ հնարավորություններ՝ ձեռք բերելու շինարարական, էներգաարդյունավետության բարձրացմանը և էներգախնայողությանն ուղղված նյութեր, կահույք կամ կենցաղային սարքավորումներ՝ մատչելի գներով:

Ծրագրի շրջանակում Հաբիթաթ Արմենիան ստեղծել է «Նորոգի» ռեսուրսային կենտրոն, որը հնարավորություն է ընձեռում ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքներին ձեռք բերել նոր կամ քիչ օգտագործված, ձևափոխված և վերանորոգված կահույք, շինանյութ և տան պարագաներ: Բացի այդ, բնակարանային աջակից ծառայությունների միջոցով հետաքրքված անձանց գործնական խորհուրդներ կտրամադրվեն բնակարանի կարգավիճակի, էներգախնայողության և էներգարդյունավետության բարելավման վերաբերյալ: Կենտրոնը կհիմնի աշխատանքային և ուսուցողական ստուդիա և հնարավորություն կընձեռի տարբեր կարողություններ և զանազան մասնագիտություններ ունեցող կամավորներին մասնակցել կենտրոնի աշխատանքներին, ձեռք բերել գիտելիքներ և հմտություններ՝ ստանալով աշխատաշուկա մուտք գործելու հնարավորություն:

Ծրագիրը հիմնված է դրամական նվիրատվությունների կամ նվիրաբերված իրերի հիման վրա՝ նոր կամ քիչ օգտագործված կահույքի, շինանյութերի և կենցաղային սարքավորումների, որոնք կվերանորոգվեն և կվաճառվեն՝ մատչելի գներով: Վերոնշյալ ապրանքների վաճառքը հնարավորություն կտա Հաբիթաթ Արմենիային՝ աջակցելու ավելի շատ ընտանիքների:

Ծրագիրն առաջարկում է օգտագործված ապրանքների վերմշակման իդեալական տարբերակ, ինչն էլ իր հերթին կբարձրացնի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ նպաստելով Հայաստանում ֆիլանտրոպիկ մշակույթի զարգացմանն ու ձևավորմանը:

Աղետների ռիսկերի նվազեցում և արձագանքում (ԱՌՆԱ)

Հաբիթաթ Արմենիան ՀՀ աղետների կառավարման թիմի (ՀՀԱԿԹ) և Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի (ԱՌՆԱՊ) անդամ է և արտակարգ իրավիճակների դեպքում կներգրավվի համատեղ գործողություններում՝ աջակցելու ՀՀ կառավարությանը կյանքեր փրկելու և կորուստները նվազեցնելու գործում:

ԱՌՆԱՊ-ի հիմնական գործողությունները ներառում են ռիսկերի նվազեցման պատրաստվածություն և արձագանքում:

Հաբիթաթ Արմենիայի Աղետների պատրաստվածության և արձագանքման ռազմավարությամբ սահմանվում են Հաբիթաթ Արմենիայի աղետների արձագանքման ծրագրի սկզբունքները, չափանիշները, ինչպես նաև իր՝ աղետների արձագանքման ծրագրի գործողությունների ու համագործակցության շրջանակները:

Հաբիթաթ Արմենիան մշակել է երկրին համապատասխանող Աղետների արձագանքման օպերատիվ պլան: Պլանը նախատեսում է արձագանքման ժամանակացույց, գնահատման ձևաթղթեր, հաղորդակցության ստանդարտ նյութեր, օրինակելի բյուջեներ և տեխնիկական լուծումներ, որոնք կարող են կիրառվել աղետի դեպքում: Հաբիթաթ Արմենիան մշակել է նաև «Ինչպես դիմակայել երկրաշարժերին» ձեռնարկ, որն ուղղված է բնակիչների՝ երկրաշարժերին դիմակայելու կարողությունների զարգացմանը:

2019 ֆինանսական տարվա ընթացքում Հաբիթաթ Արմենիան պլանավորում է բաշխել մոտ 1,000 ձեռնարկ խոցելի խմբերին:

Կամավորական աշխատանքի հնարավորություններ

Ցածր եկամուտ ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավումը «Գլոբալ վիլիջ» ծրագրի միջոցով

Ծրագրի տևողությունը՝ հուլիս, 2018թ.-հոկտեմբեր, 2018թ.
Ծրագրի բյուջեն 2019 ՖՏ-ում՝ $12,300
Ներդրված կապիտալ՝ $4,000
Պլանավորված գործընկեր ընտանիքների թիվը 2019 ՖՏ-ում՝ 6 ընտանիք
Մեկ ընտանիքին տրամադրվող միջին գումարը՝ $2,050
Ծրագրի գործընկերը՝ «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամ

«Գլոբալ վիլիջ» ծրագիրը հնարավորություն է ընձեռում կամավորներին աշխարհի տարբեր անկյուններից ճանապարհորդել Հայաստան և անմիջականորեն ներգրավվել Հաբիթաթ Արմենիայի աշխատանքներին՝ միաժամանակ ուսումնասիրելով նոր մշակույթ:

«Գլոբալ վիլիջ» թիմի անդամները ձեռք ձեռքի տված աշխատում են գործընկեր ընտանիքների և համայնքի անդամների հետ՝ միասին բարեկարգում են տներ և բարելավում ցածր եկամուտ ունեցող ընտանիքների բնակարանային պայմանները:

Կամավորները Հաբիթաթ Արմենիայի առաքելության շարժիչ ուժն են: Նրանց աշխատանքը նպաստում է հայ ժողովրդի բարեկեցությանը և հնարավորություն է տալիս նրանց կատարելու այնպիսի լայնածավալ աշխատանքներ, ինչպիսիք են՝ տան ամբողջական սվաղը, կոյուղու փոսի փորումը և այլն: Մի ընտանիքից առնվազն մի քանի ամիս կպահանջվի կատարելու այն, ինչ կամավորները կատարում են մեկ շաբաթում:

Նախկինում միկրոֆինանսական հաստատությունները վարկեր էին տրամադրում ընտանիքներին կամավորական թիմի կողմից կատարվող աշխատանքների համար անհրաժեշտ շինանյութերը ձեռք բերելու նպատակով: Ներկայում Հաբիթաթ Արմենիան համագործակցություն է հաստատել Միավորված մեթոդիստների օգնության կոմիտեի հետ («ԱՄՔՈՐ Հայաստան»), որը ֆոնդեր է հատկացնում ընտրված ընտանիքների տների վերանորոգման համար:

«ԱՄՔՈՐ Հայաստան»-ի հետ համագործակցության շրջանակում Հաբիթաթ Արմենիան հյուրընկալել է 4 կամավորական թիմերի, որոնք աջակցել են 3 ցածր եկամուտ ունեցող ընտանիքների Վայոց ձորի մարզի 2 համայնքներում:

2018 ՖՏ-ում Հաբիթաթ Արմենիան տարբեր երկրներից հյուրընկալել է 61 կամավորների, որոնք ներդրել են 1,848 ժամ թոթափելու անբավարար կենսապայմանների ծանր լուծը: 2018 ՖՏ-ում Հաբիթաթ Արմենիան ընդունել է 5 կամավորական թիմերի՝ Կանադայից, Իռլանդիայից, ինչպես նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներից:

Ծրագրի անվանումը՝ «Մեկօրյա շինարարություն»

Հաբիթաթ Արմենիան հրավիրում է բիզնեսների, կորպորատիվ խմբերի, կազմակերպությունների և անհատների թիմի մասնակցելու «Մեկօրյա շինարարություն» ծրագրին և աջակցելու բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքներին:

Անկախ ձեր շինարարական հմտություններից՝ դուք կարող եք հավաքագրել թիմ, միանալ նախաձեռնությանը և օգնել որևէ հայ ընտանիքի բարելավելու իրենց կենսապայմանները: Ծրագրի մասնակցությունն ընձեռում է արդյունավետ թիմի ձևավորման և զարգացման եզակի հնարավորություն:



Վերափոխելով կյանքեր...

Արսենը (47 տարեկան) և Արմենուհին (37 տարեկան) վերջերս տեղափոխվել էին Արարատի մարզում գտնվող Նոր Կյուրին համայնք: Նախկինում զույգը բնակվում էր Երևանում, բայց ճակատագրի բերումով, աշխատանքի և ֆինանսական սահմանափակումների պատճառով, ստիպված էին տեղափոխվել գյուղ, որպեսզի հող մշակեն ու կարողանան իրենց օրվա հացը վաստակել: Արսենը շինարար է, բայց մշտական աշխատանք չունի: Երբեմն գյուղում կարճաժամկետ մասնավոր շինարարական աշխատանքներ է անում: Նա նաև խնամում է հարևանի տնային կենդանիներին՝ լրացուցիչ գումարի դիմաց: Արմենուհին էլ օգնում է Արսենին:

Երբ Արսենն ու Արմենուհին հասկացան, որ այլևս չեն կարողանում հոգալ իրենց կարիքները Երևանում, նրանք վաճառեցին բնակարանը և մատչելի գնով ձեռք բերեցին նոր տուն: Ինչևէ, տունը հին էր, և վերանորոգման կարիք ուներ: Քանի որ Արսենը զբաղված էր գումար վաստակելով, տունը միայնակ վերանորոգելը կարող էր տարիներ տևել: Ուստի և նա դիմեց Հաբիթաթ Արմենիայից կազմակերպությանը կամավորական խումբ հյուրընկալելու համար:

- Դա մեզ համար հսկայական օգնություն էր: Այս տունը չուներ հիմնական հարմարություններ, և ես ի վիճակի չէի ամբողջ աշխատանքը միայնակ անել: Բացի այդ, իմ կինն առողջական խնդիրներ ունի, իսկ այդ պայմաններում ապրելը կարող էր դրանք վատթարացնել: Ես անչափ շնորհակալ եմ Հաբիթաթ Արմենիայից և կամավորների թիմից, ովքեր այդքան երկար ճանապարհ էին կտրել անցել մեզ օգնության ձեռք մեկնելու համար: Ես և իմ կինը շատ հուզված ենք ու դեռ չենք հավատում, որ այժմ ապրում ենք ավելի բարենպաստ պայմաններում, - ասում է Արսենը:

Գործընկեր ընտանիքի անդամ՝ Արսեն Կնյազյան

Աջակցության կոչ

Հայաստանում դեռևս կան բազմաթիվ ընտանիքներ, որոնք շարունակում են ապրել աղքատ բնակարանային պայմաններում: Միացեք մեր նախաձեռնությանը՝ կառուցելու պայծառ ապագա պատշաճ բնակարանային պայմաններ ստեղծելու միջոցով: Դուք կարող եք դառնալ մեր առաքելության մասնիկը Ձեր ֆինանսական նվիրատվությունների և կամավորական աշխատանքի շնորհիվ: Ցանկացած չափի նվիրատվություն այսօր նշանակում է, որ շուտով մեկ այլ ընտանիք կկարողանա ապրել ապահով, պատշաճ և մատչելի կացարանում: Ձեռք ձեռքի տալով՝ մենք միասին կարող ենք կոտրել աղքատության կապանքները:

Կատարեք նվիրատվություն այսօր և փոխեք ընտանիքների կյանքը: Եվս մեկ օր աղքատ բնակարանային պայմաններում ապրելը կարող է ճակատագրական լինել սերունդների համար:

Հաբիթաթ Արմենիային արված նվիրատվությունը չի հարկվում:

Կատարեք նվիրատվություն առցանց՝

ԱՄՆ դոլար - www.habitat.org/donate/armenia

Բանկային փոխանցում՝

«Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամ, HSBC Բանկ Հայաստան

ՀՀ՝ 001-174127-001

Շնորհակալություն

ՀԱԲԻԹԱԹ ՖՈՐ ՀՅՈՒՄԵՆԻԹԻ ԱՐՄԵՆԻԱ
Հասցե՝ Երևան 0001, Հանրապետության 85 ա, բն. 9
Հեռախոս՝ +37410 587 188
Էլ. փոստի հասցե՝ info@habitat.am
Կայքէջ՝ www.habitat.am

Habitat for Humanity® Armenia